ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՀԱՐՄԱՐԵՑՈՒՄՆԵՐ

«ՄԱՅՐԵՆԻ 1»

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳԻՐՔ-ՏԵՏՐԻ

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

ՈՒՍՈՒՑՉԻ ՀԱՄԱՐ

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՀԱՐՄԱՐԵՑՈՒՄՆԵՐ

«ՄԱՅՐԵՆԻ 1»
(ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆ)

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳԻՐՔ-ՏԵՏՐԻ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

ՈՒՍՈՒՑՉԻ ՀԱՄԱՐ

Երևան-2024

ՀՏԴ
ԳՄԴ

Միքայելյան Ա. Վ., Պետրոսյան Ս. Ս., Օհանյան Հ. Վ., Ուսումնական նյութերի հարմարեցումներ: «Մայրենի 1 (Ընթերցանության շրջան)»: Աշխատանքային գիրք-տետրի մեթոդական ուղեցույց ուսուցչի համար, Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն, Եր.: Էդիթ Պրինտ, 2024. - 56 էջ

Ձեռնարկը երաշխավորվել է ՀՀ ԿԳՄՍ նախարարի 29.02.2024 թվականի 284-Ա/2 հրամանով որպես ուսումնական նյութ:

Ձեռնարկը հրատարակության է երաշխավորվել Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի խորհրդի կողմից:

Մասնագիտական խմբագիր՝ մ. գ. թ., դոցենտ Ա. Հ. Սվաջյան

Գրախոսներ՝
Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Հարությունյան Մ. Ռ.
Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Մուրադյան Ս. Վ.

Հեղինակներ՝
Միքայելյան Ա. Վ., մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ
Պետրոսյան Ս. Ս.
Օհանյան Հ. Վ.

Համակարգչային ձևավորում՝ Ստեփանյան Ա. Ռ., Դավթյան Հ. Լ.

Խմբագիր՝ Սարգսյան Հ. Ա.

Սույն ուղեցույցի նպատակը հանրակրթական ուսումնական հաստատությունների առաջին դասարանի ընթերցանության շրջանի «Մայրենի 1» աշխատանքային գիրք-տետրի կիրառության գործընթացում ուսուցիչներին մեթոդական աջակցության տրամադրումն է:

ISBN ՀՏԴ
Տպաքանակը՝ 150 օրինակ ԳՄԴ

© Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն, 2024

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ 4

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՄՆԵՐ..... 11

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 55

ՆԱԽԱԲԱՆ

Սույն մեթոդական ուղեցույցն ստեղծված է «Այբբենարանի» հետայբբենական շրջանին և «Մայրենի 1» գործող դասագրքերին կից առաջադրանքների մեթոդական սկզբունքների, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք (այսուհետ՝ ԿԱՊԿ) ունեցող երեխաների համար դրանց իրականացման առանձնահատկությունների մեկնաբանման և արդյունավետ կիրառումն ապահովելու նպատակով:

Նշենք, որ գիրք-տետրում ներառված առաջադրանքների հիմնական ուղղվածությունը ԿԱՊԿ ունեցող երեխաների կարդալու և գրելու դժվարությունները տարատեսակ վարժությունների միջոցով հաղթահարելն է: Անշուշտ, դրանք միտված են նաև հասկանալով և վերլուծաբար կարդալու կարողությունների, բառապաշարի, կապակցված բանավոր խոսքի, վայելչագրական և ուղղագրական կանոններին համապատասխան գրելու կարողությունների զարգացմանը: Գիրք-տետրում ներկայացված առաջադրանքները կարող են օգտակար լինել նաև 2-րդ դասարանի 1-ին քառորդում իրականացվող աշխատանքների համատեքստում՝ նպաստելով աշակերտների՝ նախկինում ձեռք բերած գիտելիքների կրկնությանը: Ենթադրում ենք, որ այս գիրք-տետրում ընդգրկված առաջադրանքները հաջողությամբ կիրականացնեն այն աշակերտները, որոնք հաջողությամբ հաղթահարել են նախորդ շրջափուլերում (նախաայբբենական, բուն այբբենական) առաջացած խնդիրները:

Մեր խորին համոզմամբ՝ գիրք-տետրում ներկայացված առաջադրանքների իրականացման արդյունքում ԿԱՊԿ ունեցող երեխաները կկարողանան ճշտորեն, մաքուր արտասանել բառի կազմի մեջ մտնող բոլոր հնչյունները (գրեթե բոլոր առաջադրանքներում ներառել ենք հնչյունային վերլուծությունը և

համադրությունը), կարդալիս չավելացնել և չպակասեցնել տառեր, վանկեր, բառեր, «կուլ չտալ» բառերի վերջավորությունները, կարդալիս թույլ չտալ անհարկի դադարներ, կարդալ ամբողջական բառերով: Ի դեպ, մենք խրախուսում ենք ամբողջական բառերով ընթերցանությունը, սակայն բոլոր այն դեպքերում, երբ երեխան դժվարությունների է հանդիպում, առաջարկում ենք վանկային կորերով ընդգծել կարդալու նյութը (բառը, նախադասությունը, տեքստը): Գիրք-տետրում առկա որոշ առաջադրանքներ պարունակում են այնպիսի հարցադրումներ, որոնք հնարավորություն են տալիս հասկանալ և վերլուծել բնագրի բովանդակությունը և պարզ դատողություններ անել դրանց շուրջ:

Գիրք-տետրում շատ են նաև ճիշտ գրելու կարողության զարգացմանը միտված առաջադրանքներ (8, 9, 17, 18, 19, 34, 35 և այլն): Առաջադրանքների խոսքային նյութը հիմնականում վերցված է գործող դասագրքերի թեմաներից, որոնք ունեն նաև ճանաչողական, ուսուցանող և զարգացնող ուղղվածություն: Դրանով ցանկացել ենք նպաստել նաև դասագրքի նյութերը հասկանալուն և դրանց շուրջ աշխատելուն (41, 48, 55, 59, 75, 82 և այլն):

Առաջարկում ենք վարժությունները կատարել.

– ցուցադրումով (Կատարի՛ր այնպես, ինչպես ես: Համեմատիր՝ ճի՞շտ ես կատարել:)
– հիշողությամբ, մտային պլանում՝ նախնական վերլուծական աշխատանքից հետո (Հիշի՛ր: Կրկնի՛ր: Կատարի՛ր: Համեմատի՛ր:)
– նախ՝ խոսքային առաջադրանքներով ու ձևակերպումներով, որից հետո՝ ինքնուրույն:

Բոլոր այն դեպքերում, երբ ԿԱՊԿ ունեցող երեխան բավարար մակարդակով կարդալ գիտի, առաջարկում ենք չբացատրել առաջադրանքի էությունը. թող երեխան ինքնուրույն կարդա

առաջադրանքը, հասկանա, թե ինչ և ինչպես պիտի անի: Սա նույնպես նպաստում է հասկանալով կարդալու կարողության զագացմանը:

Ճիշտ է, գիրք-տետրում առկա առաջադրանքները հիմնականում միտված են կարդալու և գրելու կարողությունների զարգացմանը, այդ գործընթացում առկա դժվարությունների հաղթահարմանը, սակայն դրանցում կարելի է հանդիպել նաև լեզվական իրողությունների.

– **Հնչյունաբանություն** (հնչյուն, տառ) և վանկը՝ որպես բառի մաս: Այստեղ առավել հանդիպող դժվարություններից են՝

1. երեք և ավելի վանկեր ունեցող բառերը կարդալու և գրելու սխալներ,
2. բաղաձայնների կուտակումով բառերի ընթերցանության և գրության սխալներ,
3. առանձին տառերի (նման) գրության սխալներ,
4. հնչողությամբ մոտ՝ երկաստիճան, եռաստիճան բաղաձայնների հնչյունները տարբերակելու և բառում դրանք կարդալու ու գրելու սխալներ:

Նշված ուղղություններով շարունակվում են (դեռևս նախորդ շրջափուլերում առկա) վերլուծահամադրական աշխատանքները՝ ձայնավոր, բաղաձայն հնչյունների ճանաչում և տարբերակում, տրված հնչյունի առանձնացումը բառից, հաջորդող կամ նախորդող հնչյունի առանձնացումը բառից, հնչյունների հերթականության որոշումը բառում և այլն: Օրինակ՝ առաջադրանքներ 5, 8, 9, 20, 22, 24, 25 և այլն:

– **Բառ**. առարկա, գործողություն ցույց տվող, բառատրամաբանական վարժություններ՝ ընդհանրացնող բառերով, հատուկ անուններ: Կազմել և ընթերցել տարբեր կառուցվածք ունեցող բառեր, վանկային ընթերցանությունից անցնել բառային ընթերցանության:

– **Նախադասություն**. նախադասության ճանաչումը տեքստում, դրա առանձնացումը, որոշ դեպքերում նաև նախադասությունների կազմում՝ հենակետային բառերով, բառակապակցություններով, գծապատկերներով և նկարներով: Առաջադրանքներում առաջարկվում է պատասխանել բնագրի և նկարների վերաբերյալ հարցերին, բնագրում գտնել տվյալ հարցին պատասխանող նախադասությունը և այլն, օրինակ՝ 51, 79, 84, 88, 115 և այլն:
– **Կապակցված խոսք.** ընթերցած նյութի իմաստը հասկանալը, այն վերարտադրելը և այլն:

Գիրք-տետրի առաջին 20 առաջադրանքը վերաբերում է գրաճանաչության հետայբբենական շրջանին. դրանք միտված են բուն գրաճանաչության շրջանում յուրացրածը կրկնելուն և ամրապնդելուն: Այս բաժինը սկսվում է այբուբենի կրկնությամբ: Ճիշտ է, գիրք-տետրում ԿԱՊԿ ունեցող աշակերտը ինքնուրույն գրում է, տեղադրում է, նկարում է, սակայն ուսուցիչը պետք է հետամուտ լինի, որ երեխան անվանի նկարում պատկերված առարկան, իր կատարած գործողությունը զուգակցի խոսքով, պատմի կատարած աշխատանքի մասին և այլն:

Գիրք-տետրում ներկայացված առաջադրանքների պահանջներում ներառված են դեռևս նախորդ շրջափուլերում իրականացրած աշխատանքի ձևեր, օրինակ՝ գույնի, չափի, տարածական պատկերացումների, առարկաների ձևերի, դրանց անվանումների, հնչյունային, տեսողական, լսողական ընկալումների զարգացմանը միտված առաջադրանքներ ևս:

Առաջադրանքներում ընդգրկել ենք նաև հանելուկներ, շուտասելուկներ, որոնք երեխաների խոսքի՝ հատկապես արտասանական կողմի, մտածողության, վերլուծահամադրական կարողությունների զարգացման, կարդալու և գրելու կարողությունների

զարգացման գործընթացն առավել հետաքրքիր և դյուրին դարձնելու արդյունավետ միջոց են:

Հավելենք, որ առաջադրանքների բովանդակության մեջ ներառել ենք 1-ին դասարանի գործող մայրենիի (Այբբենարան, Մայրենի 1) դասագրքերում առկա խոսքային նյութը (բառապաշար, խոսքային կառույցներ, բնագրերից հատվածներ), առարկայական նկարները, թեմատիկ նկարների և նկար-պատմությունների բովանդակությունը:

Ինչպես նախորդ գիրք-տետրերում, այնպես էլ այստեղ առաջադրանքների կատարման ընթացքում հաշվի ենք առել նաև դասարանի մյուս աշակերտների ակտիվ մասնակցությունը, որը, մեր խորին համոզմամբ, ուսուցման լավագույն միջոց է («երեխան երեխային» սկզբունքով), օրինակ՝ առաջադրանքներ 45, 55, 56, 67, 70, 80,141, 143 և այլն. դրանց իրականացման մեթոդիկան ներկայացված է ուղեցույցի համապատասխան առաջադրանքների մեթոդական ցուցումներում:

Առաջադրանքների մեծ մասն ունի կատարման օրինակը: Այն առաջադրանքներում, որոնցում տրված չէ օրինակը, ենթադրվում է, որ աշակերտը նախորդների տրամաբանությամբ պետք է կատարի այն: Սակայն եթե դժվարանա, ուսուցչին առաջարկում ենք ցույց տալ օրինակը:

Գիրք-տետրում ընդգրկված առաջադրանքներն ունեն խաղային բնույթ, հետաքրքիր են, մատչելի: Դրանց կատարման ընթացքում երեխան գործողություններ է կատարում՝ ինքնուրույն գունավորում է, ուրվագծում, տեղադրում տառը, բառը, արտանկարում, գրելու զանազան վարժություններ կատարում և այլն: Ընտրված նյութերը ոչ միայն պարզեցված են, այլև առավել գրավիչ, հետաքրքրաշարժ, ներկայացված են սիմվոլներով: Օրինակ՝ առարկայական նկարները, բառերի գծապատկերները, վանկային կորերը և այլն: Ներկայացված առաջադրանքներում հաշվի են առնված նաև միջառարկայական

կապերը «Մաթեմատիկա», «Տեխնոլոգիա», «Կերպարվեստ», «Ես և շրջակա աշխարհը» առարկաների հետ:

Գիրք-տետրն ունի նաև հավելված. աշխատանքների ընթացքում կարելի է հավելվածի տարբեր բաժիններից ընտրել տառեր, բառաքարտեր, գունավոր վանկեր և դրանցով տարաբնույթ գործողություններ կատարել: Առաջարկված նյութերին զուգահեռ կարելի է գործածել նաև անհատական տառադարան, քանոն, գունավոր մատիտներ, քարտեր և այլ ուսումնական պարագաներ:

Մեր խորին համոզմամբ՝ գիրք-տետրում ներկայացված առաջադրանքները կնպաստեն նաև աշակերտների ինքնուրույնության, ստեղծարարության զարգացմանը որոշ դժվարություններ հաղթահարելու ճանապարհով: Այս շրջանում ևս կարևորում ենք երեխաների խոսքը, վերլուծահամադրական մտածողությունը, դիտողականությունը, բարձրագույն հոգեկան գործընթացները զարգացնելու հարցերը:

Գիրք-տետրում ներկայացված առաջադրանքները կազմվել են դասագրքերի տեքստերի խոսքային նյութի հիման վրա, որպեսզի դրանք առանձին-առանձին մշակվեն, և երեխան վարժությունների միջոցով յուրացնի այդ տեքստերում հանդիպող կարդալու և գրելու դժվարությունները, օրինակ՝ աշխատանք բաղաձայնների կուտակումով բառերի շուրջ (24, 48, 49, 50 և այլն), ուղղագրական արժեք ներկայացնող բառերի շուրջ (30, 31, 57, 58, 59, 60, 61, 63, 100 և այլն), տարբեր վանկային կառույցներ ունեցող բառերի շուրջ (66, 106, 109, 112, 119, 120 և այլն):

Մենք ակնկալում ենք, որ գիրք-տետրը ոչ թե փոխարինի դասագրքերին ու դրանց կից աշխատանքային տետրերին, այլ լրացնի դրանք ու օգնի ուսուցչին՝ հաղթահարելու ԿԱՊԿ ունեցող երեխաների ուսումնական դժվարությունները մայրենիի դասագործընթացում: Կիրառե՛ք խրախուսանքը և քաջալերե՛ք երեխայի ջանքերն ու

հաջողությունները: Նշե՛ք փոքրիկ ձեռքբերումները՝ սովորողին ոգևորելու և նրա մեջ վստահություն ձևավորելու համար:

Ընդգծենք, որ գիրք-տետրում ներկայացված ցանկացած առաջադրանք կարելի է կիրառել ստեղծագործաբար, սակայն՝ հաշվի առնելով վերը նշված սկզբունքային մոտեցումները և սովորողների անհատական կարիքները: Հաջորդիվ ներկայացնում ենք առաջադրանքների իրականացման մեթոդական ցուցումները:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՄՆԵՐ
(Ընթերցանության շրջան)

1. Ցո՛ւյց տուր և անվանի՛ր տառերը:

Այս առաջադրանքի իրականացման նպատակն է սովորած տառերի կրկնությունն ու ամրապնդումը: Ճիշտ է, այբուբենը տրված է նաև այբբենարանի համապատասխան էջում, սակայն այստեղ այն ավելի պարզ է ներկայացված, մասնավորապես՝ տառաչափն է մեծացված, ինչպես նաև զուգահեռ տրված չեն ձեռագիր տարբերակները և տառանունները, ինչը կարող է շփոթեցնել ԿԱՊԿ ունեցող երեխային: Առաջադրանքում տառերը տրված են նաև կարմիր և կապույտ գույներով, ինչը ձայնավորների և բաղաձայնների տարբերակման խնդիր է լուծում: Իհարկե, ուսման մեջ դժվարություններ ունեցող երեխաների համար ավելի դյուրին կլիներ, եթե այբուբենի տառերը տրվեին ո՛չ թե ուղղահայաց շարքերով, այլ հորիզոնական, սակայն մենք պահպանել ենք այբբենարանի մոտեցումը, որպեսզի երեխան շփոթության մեջ չընկնի: Եթե առաջադրանքը երեխայի համար բարդ լինի, առաջարկում ենք տառադարանի կտրատած տառերը դասավորել հորիզոնական ուղղությամբ և այդպես իրականացնել այն:

Առաջարկում ենք նաև, որ (առավել բարդ դեպքերում) ուսուցիչն անվանի որոշակի՝ երեխային ծանոթ տառերի հնչյունները, իսկ երեխան մատով ցույց տա դրանց տառերը:

2. Գծիկների վրա գրի՛ր այբուբենի հերթական փոքրատառերը:

3. Գծիկների վրա գրի՛ր այբուբենի հերթական մեծատառերը:

2-րդ և 3-րդ առաջադրանքների իրականացման նպատակը դարձյալ սովորած տառերի կրկնությունն ու ամրապնդումն է մի դեպքում փոքրատառերի, մյուս դեպքում՝ մեծատառերի համար, սակայն՝ բարդեցված տարբերակով. տրված են ձեռագիր տառերը, և երեխան պետք է ինքնուրույն աշխատանք կատարի՝ գրի բաց թողած փոքրատառը և մեծատառը: Մինչև պահանջվող տառը գրելը առաջարկում ենք նաև անվանել այն: Մենք առաջադրանքում ընդգրկել ենք այբուբենի բոլոր տառերը, սակայն ուսուցիչը կարող է դրանք պակասեցնել՝ ընտրելով տառերից մի քանիսը՝ պայմանավորված երեխայի առանձնահատկություններով: Դժվարության դեպքում առաջարկում ենք նայել 1-ին էջի տառերի հերթականությանը, որը կարող է հուշում հանդիսանալ: Որոշ դեպքերում առաջարկում ենք, որ կատարման մեկ օրինակն ուսուցիչը ներկայացնի: Եթե աշակերտը դժվարանա գրել համապատասխան տառը, ապա կարելի է նաև տեղադրել այն՝ օգտվելով անհատական տառադարանի տառերից:

4. Տրված մեծատառի կողքին գրի՛ր փոքրատառը, փոքրատառի կողքին՝ մեծատառը:

Այս առաջադրանքն առաջին հայացքից նման է նախորդ 2 առաջադրանքներին, սակայն վերջինիս նպատակը մեծատառի և փոքրատառի տարբերակումն է, ինչպես նաև մեկ այլ եղանակով կրկնությունն ու ամրապնդումը: Բացի այդ, առաջադրանքում տառերը տրված են ոչ թե ձեռագիր, ինչպես նախորդներում, այլ՝ տպագիր, որն ավելի է բարդացնում առաջադրանքի կատարումը:

Այս առաջադրանքում ընտրել ենք այն տառերը, որոնք նախորդներում երեխան ճանաչել և անվանել է, սակայն չի գրել, իսկ այստեղ գրում է: Այս դեպքում ևս առաջարկում ենք տառը գրելուց առաջ անվանել, որոշել՝ փոքրատառ է, թե մեծատառ, ապա անվանել,

հետո գրել պահանջվող տառը: Ուսուցիչը կարող է ընտրել և առաջարկել ներկայացված տառերի մի մասը, կարող է նաև առաջարկել ոչ թե գրել, այլ տեղադրել համապատասխան տառը: Սակայն մենք առաջարկում ենք հնարավորինս խրախուսել, որ երեխան տառը գրելու գործողությունը կատարի, քանի որ առաջադրանքները միտված են հենց այդ գործընթացի զարգացմանը:

5. ա) Անվանի՛ր պատկերված առարկաները:

բ) Քանի՞ հնչյուն կա յուրաքանչյուր բառում: Կազմի՛ր այդ բառերը տառադարանի կտրատած տառերից:

5-րդ առաջադրանքի իրականացման նպատակը բառի հնչյունային վերլուծություն և համադրություն կատարելու կարողության զարգացումն է: Միևնույն ժամանակ առաջարկում ենք կազմել այդ բառերը: Սակայն եթե առաջադրանքի այս պահանջի իրականացումը բարդ է տվյալ երեխայի համար, ապա կարելի է առաջարկել կազմել 1 (2, 3, 4) բառ: Այս դեպքում ևս ուսուցիչը կարող է կատարման մեկ օրինակը նաև ցույց տալ: Խոսքի բացակայության դեպքում երեխան կարող է ցույց տալ առարկան կամ համադրել ձեռքի տակ եղած նկարների կամ առարկաների հետ: Հնչյունային ընկալման և վերլուծության դժվարության դեպքում կարելի է թղթի վրա կամ նկարների տակ գրել տառերը և առաջարկել երեխային կտրատած տառերի հետ համադրել՝ բարձրաձայն արտասանելով հնչյունները:

6. ա) Անվանի՛ր պատկերված առարկաները: Գրի՛ր միայն այն անվանումները, որոնցում լսվում է *ռ* հնչյունը:

բ) Ընդգծի՛ր *ռ* տառը:

6-րդ առաջադրանքի իրականացման նպատակը դարձյալ հնչյունային վերլուծություն կատարելու կարողության զարգացումն է: Սակայն ավելանում է նաև հնչողությամբ մոտ հնչունների,

մասնավորապես *ր-ռ* բաղաձայնների տարբերակման կարողության զարգացումը: Այս առաջադրանքի երկրորդ՝ գրելու հատվածը կատարելիս (դժվարության դեպքում) կարելի է առաջարկել ոչ թե գրել *ռ* տառը պարունակող բառերը, այլ ընդգծել այն առարկաների նկարները, որոնց անվանումներում լսվում է այդ հնչյունը: Սակայն դարձյալ ընդգծում ենք, որ մեր նպատակը գրելու կարողության զարգացումն է, հետևաբար կարելի է առաջարկել գրել գոնե դրանցից մեկը: Գրելու դժվարություն ունեցող երեխան կարող է նաև բանավոր արտասանել հնչյունները: Հնչյունային վերլուծության զգալի դժվարության դեպքում կարելի է նկարների ներքևում գրել անվանումները և առաջարկել, որ տողի վրա արտագրի այն բառերը, որոնցում լսվում է ռ հնչյունը: Կարելի է բարձրաձայն արտասանել բառերը և առաջարկել սովորողին փակել աչքերն ու բարձրացնել ձեռքը այն դեպքերում, երբ լսում է ռ հնչյունը:

7. ա) Անվանի՛ր պատկերված առարկաները: Որոշի՛ր յուրաքանչյուր բառի առաջին հնչյունը:

բ) Տեղադրի՛ր բառաքարտերը համապատասխան նկարի տակ:

գ) Գրի՛ր միայն 5 հնչյունից կազմված բառերը:

7-րդ առաջադրանքի նպատակը դարձյալ հնչյունային վերլուծություն կատարելու կարողության զարգացումն է՝ բառից առաջին հնչյունն առանձնացնելու եղանակով: Միևնույն ժամանակ երեխան, ընտրելով և տեղադրելով համապատասխան բառաքարտերը, կարդալու վարժություն է կատարում գլոբալ ընթերցանության եղանակով:

Դժվարության դեպքում կարող ենք պատկերների ներքևում գրել բառերը և օգտագործել որպես հուշում՝ մատնանշելով տառը:

Առաջադրանքի հաջորդ հատվածը վերաբերում է գրելու գործընթացին, որն իրականացվում է դարձյալ հնչյունային վերլուծություն կատարելու միջոցով, այն է՝ երեխան պետք է գրի միայն 5 հնչյունից կազմված բառերը: Այս առաջադրանքում առաջարկված բառերի հնչյունների և տառերի քանակը նույնն է, հետևաբար կարելի է որպես զննականություն կիրառել բառաքարտի տառերը, եթե երեխան դժվարանա մտքում կատարել նշված գործողությունը:

8. Արտագրի՛ր բառերը: Հաշվի՛ր և փակագծում գրի՛ր տառերի քանակը:

8-րդ առաջադրանքի նպատակը գրելու կարողության զարգացումը և երեխայի ուշադրությունը բառում տառային վերլուծություն կատարելու վրա կենտրոնացնելն է: Նշենք նաև, որ տրված են այնպիսի բառեր, որոնցում հնչյունների և տառերի քանակը նույնն է:

9. Արտագրի՛ր բառերը 3 շարքով:

9-րդ առաջադրանքի կատարման նպատակը բառում տառային վերլուծություն կատարելու կարողության զարգացումն է, ինչպես նաև բառերի համեմատումն ու տարբերակումը՝ ըստ տառերի քանակի: Երեխան պետք է հաշվի բառում տառերի քանակը և որոշի, թե որ սյունակում արտագրի տվյալ բառը: Միևնույն ժամանակ զարգանում է գրելու կարողությունը: Դժվարանալու դեպքում կարելի է առաջարկել յուրաքանչյուր սյունակում գրել մեկական բառ:

10. ա) Անվանի՛ր պատկերված կենդանիներին: Դրանց անվանումները կազմի՛ր կտրատված տառերով:
բ) Գրի՛ր միայն 4 տառից կազմված բառերը:

10-րդ առաջադրանքի իրականացման նպատակը դարձյալ բառը տառային վերլուծության ենթարկելու կարողության զարգացումն է, սակայն մինչև բառերը վերլուծելը և դրանցում տառերի քանակը որոշելը երեխան պետք է անվանի պատկերված կենդանիներին և այդ անվանումները կազմի տառադարանի կտրատած տառերով, ինչը կդյուրինացնի հաջորդ քայլի կատարումը՝ բառի կազմումը, ընդ որում, այստեղ որոշակի առաջադրանք կա. պետք է գրառել միայն 4 տառից կազմված բառերը: Վերջին առաջադրանքի կատարման ընթացքում (եթե երեխան դժվարանում է) բառում տառերի քանակը կարող է հաշվել ոչ թե մտային պլանում, այլ կազմած բառերի տառերը հաշվելով: Գրելու դժվարություն ունեցող երեխային ուսուցիչը կարող է առաջարկել նշել/ընդգծել այն բառերը, որոնք կազմված են 4 տառից:

11. Կարմիր մատիտով գունավորի՛ր ձայնավորով փուչիկները:

12. Կապույտ մատիտով գունավորի՛ր բաղաձայնով փուչիկները:

11-րդ և 12-րդ առաջադրանքների իրականացման նպատակը հետաքրքիր աշխատանքի՝ փուչիկները գունավորելու միջոցով ձայնավոր և բաղաձայն հնչյուն-տառերի մասին պատկերացումների ամրապնդումն է: Միևնույն ժամանակ զարգանում են մատների մանր մկանները, ինչի համար կարևոր է, որ ուսուցիչը հետևի ուրվագծված պատկերի սահմանները չխախտելուն: Դժվարանալու դեպքում կարելի է առաջարկել համապատասխան գույնի մատիտով անցնել տառի պատկերի վրայով կամ նշել համապատասխան փուչիկը: Նմանատիպ բոլոր վարժությունների համար կարելի է կիրառել հետևյալը՝ պատրաստել 2 քարտ, որոնց վրա նշված կլինեն բոլոր ձայնավորները և բաղաձայնները՝ ընդգծված համապատասխանաբար կարմիր և կապույտ գույներով: Ամեն անգամ, երբ երեխան դժվարանում է,

կարելի է տրամադրել այս քարտերը՝ որպես հուշում: Առաջընթացի դեպքում աստիճանաբար կարելի է նվազեցնել հուշող քարտերը: Հավելվածի վերջում կարող եք գտնել այդ քարտերի օրինակներն ու օգտագործել:

13. Կապույտով գունավորի՛ր բաղաձայններով շրջանները, կարմիրով՝ ձայնավորներով շրջանները:

13-րդ առաջադրանքի իրականացման նպատակը, ի տարբերություն նախորդ երկուսի, ձայնավոր և բաղաձայն հնչյուն-տառերի տարբերակումն է միևնույն առաջադրանքում: Վերևում նշված մոտեցումները կարելի է կիրառել նաև այս առաջադրանքի կատարման ընթացքում:

14. Կարդա՛ բառերը: Ընդգծի՛ր բաղաձայնները:

14-րդ առաջադրանքը նախորդ երեք առաջադրանքների տրամաբանական շարունակությունն է, այն է՝ ճանաչել և ընդգծել բաղաձայնները բառում: Այս վարժության իրականացման նպատակը ոչ միայն բաղաձայն հնչյուն-տառերի կրկնությունն է, այլև բառերի ընթերցումը: Գիրք-տետրում բառերը չենք ներկայացրել վանկային կորերով, սակայն անհրաժեշտության դեպքում առաջարկում ենք ուսուցչին բազմավանկ բառերը նշել կորագծերով՝ կարդալու գործընթացը հեշտացնելու նպատակով:

15. ա) Անվանի՛ր պատկերված կենդանիներին:
Լրացրո՛ւ/տեղադրի՛ր բաց թողնված տառերը:
բ) Կարդա՛ ստացված բառերը: Ընդգծի՛ր ձայնավորները:

15-րդ առաջադրանքի իրականացման նպատակը կարդալու կարողության ամրապնդումն է: Բայց առաջադրված խնդիրը դյուրինացնելու համար առաջարկել ենք նախ՝ անվանել

համապատասխան պատկերները, իսկ հետո՝ գրել, դժվարանալու դեպքում տառադարանի կտրատված տառերից ընտրել և ճիշտ տեղում տեղադրել համապատասխան տառը: Առաջադրանքի երկրորդ հատվածում պահանջվում է, որ երեխան կարդա ստացված բառերը, ինչը, կարծում ենք, արդեն դժվարություն չի ներկայացնի: Վարժության վերջին հատվածում երեխան պետք է ուշադրություն դարձնի ձայնավոր հնչյուն-տառերին՝ ընդգծելով դրանք: Եթե երեխան դժվարանա, ապա առաջարկում ենք (մինչև առաջադրանքը կատարելը) վերհիշել բոլոր ձայնավորները, իսկ հետո ընդգծել դրանք բառերում: Առավել բարդ դեպքերում կարելի է սեղանին դասավորել բոլոր ձայնավոր հնչյուն-տառերը, իսկ երեխան, նայելով դրանց, կփորձի գտնել պահանջվող տառը իր կազմած բառերում:

16. Անվանի՛ր պատկերված նկարները: Գունավորի՛ր այն նկարը, որի անվանումը սկսվում է ձայնավորով:

Այս առաջադրանքին նման առաջադրանքներ երեխաներն արդեն իրականացրել են դեռևս նախորդ գիրք-տետրում, սակայն այստեղ ձայնավորների և բաղաձայնների տարբերակման նպատակով առաջարկում ենք իրականացնել ևս մեկ անգամ, ինչը նախապատրաստում է երեխաներին հաջորդ առաջադրանքի կատարմանը: Դժվարության դեպքում կարելի է պատկերներն անվանելուց հետո առաջարկել գրել բառերը, որոշել ձայնավորով սկսվողները:

17. Բառաշարքից արտագրի՛ր ձայնավորով վերջացող բառերը:

17-րդ առաջադրանքի իրականացման նպատակը հնչյունային վերլուծություն կատարելու, գրելու, ինչպես նաև ձայնավոր, բաղաձայն հնչյուն-տառերը տարբերակելու կարողության զարգացումն է: Ուզում

ենք նշել, որ առավել բարդ է ձայնավոր հնչյունն առանձնացնել հատկապես բառավերջում, հետևաբար դժվարանալու դեպքում առաջարկում ենք նախ՝ բարձրաձայն կարդալ բոլոր բառերը, կատարել հնչյունային վերլուծություն, մասնավորապես որոշել բառավերջին հնչյունը, ապա՝ թե ո՛ր բառերը պետք է արտագրել: Առաջադրանքը պարզեցնելու նպատակով կարելի է առաջարկել բառաշարքից գտնել և արտագրել ձայնավորով վերջացող գոնե մեկ բառ կամ միայն ընդգծել ձայնավորով վերջացող բառերը:

18. Արտագրի՛ր ձայնավորով սկսվող նախադասությունը:

18-րդ առաջադրանքի իրականացման նպատակը երեխայի ուշադրությունը ձայնավոր հնչյուն-տառերի վրա կենտրոնացնելն է, սակայն այս դեպքում առաջարկել ենք նախադասություններ, ինչը, մեր համոզմամբ, առավել հետաքրքիր է, քանի որ միտք է արտահայտում: Առաջադրանքի կատարումը ենթադրում է մինչև արտագրելը նախ՝ ընթերցել նախադասությունները, ապա՝ որոշել, թե դրանցից որն է սկսվում ձայնավորով, իսկ հետո՝ արտագրել այն: Դժվարանալու դեպքում կարելի է առաջարկել արտագրել միայն տվյալ՝ ձայնավորով սկսվող բառը կամ ընդգծել այն: Նշենք նաև, որ կարդալը դյուրինացնելու համար կարելի է վանկային կորերով ընդգծել բազմավանկ բառերը:

19. Արտագրի՛ր այն նախադասությունը, որի բոլոր բառերը սկսվում են բաղաձայնով:

Տե՛ս առաջադրանք 18-ը, սակայն այս դեպքում երեխան պետք է յուրաքանչյուր բառն ուշադիր դիտարկի, որպեսզի կատարի առաջադրանքը:

20. Կարդա՛ բառազույգերը: Գրի՛ր 2-րդ բառում կորած տառը:

20-րդ առաջադրանքի իրականացման նպատակը կարդալու կարողության զարգացումն է խաղային տարրերով. երեխան «ստիպված է» կարդալ բառազույգերը, որպեսզի գտնի «կորած» տառը և գրառի այն: Դժվարանալու դեպքում կարելի է առաջարկել ընդգծել այդ տառը:

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅՈՒՆ

21. Գծով միացրո՛ւ նկարը համապատասխան գծապատկերին:

21-րդ առաջադրանքը երեխան կարող է իրականացնել՝ գծապատկերի մեջ գրված տառերի քանակը հաշվելով, սակայն այս վարժության նպատակը մտային պլանում բառի հնչյունատառային վերլուծություն կատարելն է և պատկերը բառի գծապատկերին համապատասխանեցնելը:

22. Տրված բառերն արտագրի՛ր համապատասխան տողի վրա:

22-րդ առաջադրանքի իրականացման նպատակը դարձյալ բառը տառային վերլուծության ենթարկելու և բառում տառերի քանակը որոշելու, ինչպես նաև գրելու կարողության զարգացումն է: Միևնույն ժամանակ երեխան խմբավորում է բառերն՝ ըստ տառերի քանակի, ինչը զարգացնում է նաև մտածողությունը: Յուրաքանչյուր բառի տառերի քանակը հաշվելիս երեխան ևս մեկ անգամ առնչվում է բառապատկերին, որն ամրապնդում է բառի տեսողական պատկերը: Դժվարանալու դեպքում ուսուցիչը կարող է առաջարկել արտագրել միայն 2 (3, 4) տառ ունեցող բառերը: Շատ ավելի բարդ դեպքերում կարելի է պարզապես համապատասխան թվերը տեղադրել բառերի տակ:

23. Կարդա՛: Ընդգծի՛ր ամենաերկար բառը և վանկատի՛ր կորագծերով:

23-րդ առաջադրանքի իրականացման նպատակը երեխայի կարդալու կարողության զարգացումն է: Երեխան ակամայից կենտրոնացնում է ուշադրությունը բոլոր բառերի վրա, քանի որ պահանջվում է գտնել ամենաերկար բառը և վանկատել կորագծերով:

Սակայն, մինչ բառը գտնելը, երեխան պետք է կարդա բանաստեղծության հատվածը: Դժվարանալու դեպքում կարելի է առաջարկել գտնել միայն ամենաերկար բառը և ընդգծել: Այս առաջադրանքի իրականացումը նպաստելու է նաև դասագրքի համապատասխան բանաստեղծությունը կարդալուն և հասկանալուն:

24. Կարդա՛: Ընդգծի՛ր իրար կողքի 2 բաղաձայն ունեցող բառերը:

24-րդ առաջադրանքի իրականացման նպատակը կարդալու կարողության զարգացումն է:

25. Կարդա՛: Ընդգծի՛ր ամենակարճ բառը/բառերը:

25-րդ առաջադրանքի նպատակն է դյուրինացնել կարդալու գործընթացը, միևնույն ժամանակ ԿԱՊԿ ունեցող աշակերտի ուշադրությունը կենտրոնացնել ուսումնասիրվող ստեղծագործության վրա: Հնարավոր է, որ առաջադրանքի առաջին պահանջը երեխան դժվարանա կատարել: Այս դեպքում ուսուցիչը կարող է անցնել երկրորդին, սակայն դրանից հետո ցանկալի է նորից հանձնարարել կարդալ, որը, մեր համոզմամբ, արդեն առավել մատչելի կլինի:

26. Տրված ձեռագիր մեծատառի կողքին գրի՛ր համապատասխան փոքրատառը: Նմանատիպ վարժությունների ժամանակ որպես հուշում կարող ենք տրամադրել այբուբենի քարտերը:

27. Տրված տպագիր մեծատառի կողքին գրի՛ր համապատասխան փոքրատառը:

28. Տրված ձեռագիր փոքրատառի կողքին գրի՛ր համապատասխան մեծատառը:

29. Տրված տպագիր փոքրատառի կողքին գրի՛ր համապատասխան մեծատառը:

Այս առաջադրանքների իրականացման նպատակը տպագիր, ձեռագիր, մեծատառ, փոքրատառ տառերի տարբերակումն ու կրկնությունն է: Գիրք-տետրում ընտրված են ամենագործածական ու հաճախ կիրառելի տառերը: Դժվարանալու դեպքում կարելի է մի քանի տառի կողքին կատարման մի քանի օրինակ գրել թույլ գծով կամ կետագծերով:

30. ա) Կարդա՛: Նախադասություններից արտագրի՛ր մարդկանց անունները:

բ) Անվանի՛ր երեխաների անունների առաջին հնչյունը: Գրի՛ր դրա տառը:

30-րդ առաջադրանքի իրականացման նպատակը կարդալու և գրելու կարողությունների զարգացումն է՝ հետաքրքիր տարրեր կիրառելով: Այն է՝ երեխան մինչև չկարդա տրված նախադասությունը, չի կարող առանձնացնել և հետո էլ՝ արտագրել մարդկանց անունները: Առաջադրանքի հաջորդ պահանջը կատարելու համար երեխան պետք է հասկանա կարդացածը, քանի որ անհրաժեշտ է անվանել միայն երեխաների անունների առաջին հնչյունը, իսկ դրա տառը գրելը նպատակ ունի ամրապնդել հնչյունի և տառի գաղափարը: Դժվարանալու դեպքում կարելի է մինչև առաջին հնչյունն անվանելը կատարել հնչյունային վերլուծություն:

31. Գրի՛ր ձայնավորով սկսվող 2 աղջկա և 2 տղայի անուն:

32. Գրի՛ր քո ընկերների անունները:

Այս առաջադրանքների իրականացման նպատակը մարդանց անունները մեծատառով գրելու իմացության ամրապնդումն է, ինչպես նաև ձայնավոր, բաղաձայն հնչյունների տարբերակումը: Միևնույն ժամանակ երեխան հաճույքով է հիշում և գրում իր ընկերների անունները: Դժվարանալու դեպքում առաջադրանքը կարելի է նախ՝ բանավոր կատարել, ապա՝ գրառել:

33. Նկարները համարակալի՛ր այնպես, որ հաջորդ նկարի անվանումը 1 հնչյունով ավելի լինի: Լրացրո՛ւ վանդակները:

Այս առաջադրանքի իրականացման նպատակը բառի հնչյունատառային վերլուծություն կատարելու կարողության զարգացումն է, այս դեպքում՝ նկարների միջոցով: Որպես հենք առաջարկել ենք բառերի գծապատկերները, որոնք հուշում են բառում հնչյուն-տառերի քանակը: Այս աշխատանքը կատարելուց հետո առաջարկում ենք նաև լրացնել վանդակները՝ ստանալով բառերը: Կարելի է վանդակներում տեղադրել անհատական տառադարանի կտրատած տառերը կամ բառերը գրել վանդակներում: Դժվարանալու դեպքում առաջարկում ենք նախապես անվանել պատկերները, դրանք հնչյունային վերլուծության ենթարկել, հետո միայն կատարել առաջադրանքը:

34. Արտագրի՛ր բառերը՝ յուրաքանչյուրի կողքին գրելով տառերի քանակը:

34-րդ առաջադրանքի իրականացման նպատակը գրելու կարողության զարգացումն է, որի ընթացքում երեխայից պահանջվում է նաև հաշվել տառերի քանակը բառում: Վերջինս կնպաստի

ինքնաստուգում կատարելուն և կզարգացնի ինքնահսկման կարողությունը գրելու ընթացքում:

35. Կարդա՛: Արտագրի՛ր 4 տառից կազմված բառերը:

Այս առաջադրանքը նախորդի հակառակ գործողությունն է ենթադրում. այստեղ արդեն երեխան նախ պետք է որոշի յուրաքանչյուր բառում տառերի քանակը, հետո առանձնացնի 4 տառից կազմված բառերը և արտագրի: Դժվարանալու դեպքում կարելի է առաջարկել, որ երեխան միայն ասի 4 տառից կազմված բառերը, կամ գրառի դրանցից 1-ը (2-ը, 3-ը):

36. Հաշվի՛ր և բառերի կողքին գրի՛ր՝ քանի՞ ձայնավոր կա:

36-րդ առաջադրանքի իրականացման նպատակը բառի տառային պատկերը մտապահելու, ձայնավորները բաղաձայններից տարբերակելու կարողության զարգացումն է: Դժվարանալու դեպքում կարելի է առաջարկել ընդգծել ձայնավորները և անվանել դրանք կամ օգտագործել հուշող քարտ:

37. ա) Արտագրի՛ր գարնան ամիսները ճիշտ հերթականությամբ:

բ) Ասա՝ ո՞ր ձայնավորն է կրկնվել բոլոր բառերում: Ընդգծի՛ր այն:

Այս առաջադրանքի իրականացման նպատակը բառում ձայնավորները ճանաչելն ու առանձնացնելն է, սակայն այս նպատակի իրականացումը առաջարկել ենք հետաքրքիր ձևաչափով՝ գարնան ամիսները ճիշտ հերթականությամբ արտագրելով: Մյուս կողմից էլ՝ երեխան նախ պետք է կարդա, այնուհետև՝ գրառի: Դժվարանալու դեպքում կարելի է ընդգծել ամիսների անվանումների ձայնավորները՝

առանց արտագրելու, իսկ գարնան ամիսների ճիշտ հեթականությունը կարելի է ասել բանավոր:

38. ա) Կարդա՛ բառազույգերը: Ասա՝ ո՞րն է դրանց տարբերությունը:
բ) Առաջին շարքի բառերի հետ գործածի՛ր *մի* բառը, երկրորդ շարքի բառերի հետ՝ *իմ* բառը:

38-րդ առաջադրանքի իրականացման նպատակը բառերի վերջավորությունները ճիշտ կարդալու կարողության զարգացումն է: Դժվարանալու դեպքում կարելի է երեխային առաջարկել գտնել բառազույգերի նմանությունը, որն առավել հեշտ է (Օրինակ՝ գտի՛ր՝ բառերի մեջ ո՞ր հատվածն է նույնը): Առաջադրանքի 2-րդ պահանջի կատարման ժամանակ դժվարանալիս առաջարկում ենք առաջին բառազույգի կողքին մատիտով ավելացնել ***մի*** և ***իմ*** բառերը:

39. Խառնված տառերից ստացի՛ր համապատասխան նկարի անվանումը և գրի՛ր:

Նման առաջադրանքի երեխաներն արդեն հանդիպել են նախկինում, սակայն այլ բառերի օրինակով, հետևաբար նրանց համար առավել հասկանալի կլինի առաջադրանքի իրականացումը: Նպատակը կարդալու կարողության զարգացումն է: Որպես օգնող միջոց առաջարկել ենք նկարներ: Կարելի է նաև այս առաջադրանքն իրականացնել առանց նկարների:

40. ա) Գծիկի վրա գրի՛ր *բ* տառը, ստացի՛ր բառ և կարդա՛:
բ) Հաշվի՛ր և ասա՛ տառերի քանակը յուրաքանչյուր բառում:

Ընդհանուր առմամբ այս առաջադրանքը ևս ծանոթ է երեխային, սակայն ավելացել է 2-րդ հատվածը, որի նպատակը բառը տառերի

վերլուծելու կարողության զարգացումն է: Կարելի է առաջարկել նաև գրել կամ ցույց տալ համապատասխան թիվը:

41. Արտագրի՛ր նախադասությունները: Ընդգծի՛ր *ռ, ր* բաղաձայնները:

Այս առաջադրանքի նպատակը գրելու կարողության զարգացումն է որոշակի առաջադրանքով արտագրության միջոցով: Նպատակը *ռ* և *ր* հնչյուն-տառերի տարբերակումն է: Կարելի է վերջում առաջարկել նաև կարդալ տրված նախադասություններից գոնե 2-ը:

42. ա) Գծիկի վրա գրի՛ր *ր* կամ *ռ*, ստացի՛ր բառ և կարդա՛:
բ) Հաշվի՛ր և ասա՛ տառերի քանակը յուրաքանչյուր բառում:

Այս առաջադրանքը նման է 40-ին, սակայն երեխան պետք է ընտրություն կատարի 2 հնչյուն-տառերի միջև, որը բավական բարդացնում է առաջադրանքը: Առաջադրանքի իրականացման նպատակը *ռ-ր* հնչյուն-տառերի տարբերակումն է և դրանց ճիշտ արտասանությունը: Այդ նպատակով առաջարկել ենք նաև կարդալ ստացված բառերը, իսկ բառերն այնպես են ընտրված, որ մի դեպքում *ռ* լինի, իսկ հաջորդում՝ *ր*: Դժվարանալու դեպքում կարելի է խմբավորել՝ դասավորելով տրված բառերը 2 շարքով:

Բացի վերը նշվածից, երեխան պետք է կատարի նաև բառի տառային վերլուծություն:

43. Գծիկի վրա գրի՛ր տրված տառերից մեկը և ստացի՛ր բառ: Կարդա՛ այն:

Ի տարբերություն նախորդ առաջադրանքների (40, 42)՝ այստեղ երեխան պետք է ընտրություն կատարի՝ տրված երկու տառերից ընտրելով մեկը, որը մի փոքր բարդացնում է աշխատանքը:

Դժվարանալու դեպքում ուսուցիչը կարող է ընդգծել անհրաժեշտ տառը, իսկ աշակերտը՝ գրառել գծիկի վրա և կարդալ ստացված բառը:

44. Կատարի՛ր թվաբանական գործողությունները և գրի՛ր ստացված բառերը:

Այս առաջադրանքի իրականացման նպատակը ոչ սովորական եղանակով կարդալու ուսուցումն է: Մաթեմատիկայից իրեն ծանոթ գործողություններ կատարելով՝ երեխան համադրում է տառերն ու վանկերը և ստանում բառեր, այնուհետև դրանք պետք է գրառի: Ցանկալի է, որ երեխան կարդա ստացված բառը: Օգնության նպատակով առաջարկել ենք հենակետային նկարներ, որոնք կնպաստեն ստացված բառերն ընթերցելուն և հասկանալուն: Կարդացած բառի հասկացումը ստուգելու նպատակով կարելի է երեխային առաջարկել նաև նկարել ստացված բառի պատկերը:

45. Կարդա՛ ասացվածքը: Կարմիր մատիտով ընդգծի՛ր ձայնավորները:

45-րդ առաջադրանքի իրականացման նպատակը կարդալու վարժություն կատարելն է: Եթե երեխան դժվարանա, առաջարկում ենք նախ ընդգծել ձայնավորները, հետո կարդալ ասացվածքը (որպեսզի երեխան նախապես ծանոթանա բառերում տառերի հերթականությանը): Կամ էլ առաջարկում ենք աշխատել զույգերով և կարդալը հանձնարարել աշակերտներից մեկին:

46. Կարդա՛: Դո՛ւրս գրիր *ա* ձայնավորով սկսվող բառերը:

Այս առաջադրանքի իրականացման նպատակը և՛ կարդալու վարժություն կատարելն է, և՛ ձայնավորների տարբերակումը: Միևնույն ժամանակ երեխան պետք է կատարի գրավոր վարժություն՝ արտագրելով միայն *ա* ձայնավորով սկսվող բառերը:

47. Կարդա՛: Կարմիր մատիտով ընդգծի՛ր բոլոր ձայնավորները:

Այս առաջադրանքը բնույթով նման է նախորդներին, սակայն մենք կիսատ ենք թողել տեքստը, որպեսզի երեխան ցանկանա իմանալ, թե ինչ եղավ հետո:

48. Կարդա՛: Ընդգծի՛ր իրար կողքի 2 բաղաձայն ունեցող բառերը:

48-րդ առաջադրանքի իրականացման նպատակը ընթերցանության համար դժվարություն ներկայացնող բառերի տառային պատկերի ընկալման ամրապնդումն է, ինչպես նաև բաղաձայն հնչյուն-տառերի տարբերակումը: Դժվարանալու դեպքում առաջարկում ենք օրինակը ցույց տալ:

49. Բառաշարքից արտագրի՛ր այն բառերը, որոնցում 2 բաղաձայն իրար կողքի են:

Տե՛ս առաջադրանք 48-ը, սակայն այս դեպքում երեխան ոչ թե ընդգծում, այլ արտագրում է բառը, ինչն առավել տպավորիչ է: Այս դեպքում օրինակը տրված է, սակայն, դժվարանալու դեպքում կարելի է ևս մեկ օրինակ ավելացնել:

50. Բառաշարքից արտագրի՛ր այն բառերը, որոնցում 3 բաղաձայն իրար կողքի են:

Տե՛ս առաջադրանք 48-49-ը, սակայն այս դեպքում առաջադրանքի պահանջը վերաբերում է 3 բաղաձայնի: Նշված 3 առաջադրանքները նպաստում են նաև բառի տառային վերլուծություն կատարելու կարողության զարգացմանը: Դժվարության դեպքում կարելի է տրամադրել հուշող քարտերը:

51. ա) Գծով միացրո՛ւ բառը համապատասխան նկարին:

բ) Ո՞ր բառն է ավելորդ: Գրի՛ր այն:

Նման առաջադրանք երեխան նախկինում ևս կատարել է, սակայն այս դեպքում կարևորվում է նաև կարդացածը հասկանալը, քանի որ պատկերներից մեկը չունի համապատասխան բառը (ավելորդ է), որն էլ երեխան պետք է արտագրի: Գրավոր խոսքի դժվարության դեպքում կարելի է նաև ուղղորդել:

52. ա) Լրացրո՛ւ բաց թողած ձայնավորը:

բ) Ո՞ր բառն է ավելորդ: Գրի՛ր այն:

Տե՛ս առաջադրանք 51-ը, սակայն այս դեպքում երեխան պետք է բառերն ամբողջացնի անհրաժեշտ ձայնավորով, իսկ այդ հարցում նրան կօգնեն համապատասխան նկարները:

53. Արտագրի՛ր բառերը 2 շարքով:

53-րդ առաջադրանքի նպատակը ընդհանրացում կատարելու կարողության զարգացումն է, որն առաջարկել ենք իրականացնել արտագրության միջոցով: Երեխան կարդում է բառը, ասում, թե որ շարքում պետք է գրի, գրառում է, հետո անցնում հաջորդ բառին: Կատարման օրինակը տրված է: Դժվարանալու դեպքում առաջարկում ենք կապույտով ընդգծել թռչունների, կանաչով՝ գրենական պիտույքների անվանումները:

54. Կարդա՛ տրված բառերն առանց առաջին բաղաձայնի: Գրի՛ր ստացված նոր բառերը:

54-րդ առաջադրանքի իրականացման նպատակը բառը տառային վերլուծության ենթարկելն է, ինչպես նաև գրավոր վարժություն կատարելը: Դժվարանալու դեպքում առաջարկում ենք թղթի շերտիկով ծածկել բառի առաջին բաղաձայնը:

55. Կարդա՛ ասացվածքը: Ընդգծի՛ր *ե* տառը: Որոշի՛ր՝ որերորդն է բառում:

55-րդ առաջադրանքի իրականացման նպատակը երեխայի ուշադրությունը բառում *ե* տառի վրա կենտրոնացնելն է, որը և՛ պետք է ընդգծի, և՛ որոշի բառում ունեցած դիրքը՝ որերորդն է: Եթե երեխան դժվարանա կարդալ հայտնի ասացվածքը, այն կարելի է հանձնարարել աշակերտներից մեկին:

56. Գուշակի՛ր հանելուկը: Որոշի՛ր՝ քանի՞ հնչյունից է կազմված պատասխան-բառը:

56-րդ առաջադրանքի իրականացման նպատակը հնչյունային վերլուծություն կատարելու կարողության զարգացումն է, որի համար ընտրվել է հանելուկի պատասխան-բառը: Առաջադրանքը կատարելուն նպաստելու է համապատասխան նկարը: Ցանկալի է, որ երեխան ինքը ընթերցի հանելուկը, սակայն դժվարանալու դեպքում առաջարկում ենք հանձնարարել աշակերտներից մեկին:

57. Կարդա՛ տրված բառերը: Արտագրի՛ր միայն *է*-ով սկսվողները:

57-րդ առաջադրանքի իրականացման նպատակը կարդալու և գրելու կարողության զարգացումն է, միևնույն ժամանակ՝ *է* տառով սկսվող բառերի առանձնացումը: Դժվարանալու դեպքում կարելի է 1 օրինակը գրել:

58. Կարդա՛ բանաստեղծությունը: Ընդգծի՛ր բառասկզբում *ո* տառ ունեցող բառերը:

Տե՛ս առաջադրանք 57-ը, սակայն այս դեպքում երեխայի ուշադրությունը կենտրոնացնում ենք *ո* տառի վրա: Եվ, ի տարբերություն նախորդ առաջադրանքի, որտեղ բառեր են տրված,

այստեղ առաջարկել ենք փոքրիկ բանաստեղծություն, որն ավելի հետաքրքիր է երեխայի համար:

59. Կարդա՛: Ընդգծի՛ր *օ* տառը: Որոշի՛ր նրա տեղը բառում:

Տե՛ս առաջադրանք 55-ը:

60. Տրված բառաշարքից արտագրի՛ր *օ* -ով սկսվող բառերը.

Տե՛ս առաջադրանք 57-ը:

61. Արտագրի՛ր բառերը՝ խմբավորելով.

Տե՛ս առաջադրանք 53-ը:

62. Կարդա՛ նախադասությունները: Արտագրի՛ր *ո* տառով սկսվող մարդկանց անունները:

Այս առաջադրանքի իրականացման նպատակը բառասկզբում *ո* տառի ուղղագրության, ինչպես նաև մարդկանց անունները մեծատառով գրելու կարողության ամրապնդումն է:

63. Կարդա՛ մարդկանց անունները: Արտագրի՛ր *ո* տառ ունեցողները.

Տե՛ս առաջադրանք 62-ը, սակայն այս դեպքում *ո*-ի ուղղագրությունը բառամիջում է, ինչն ամրապնդում է հատուկ անունների ուղղագրությունը:

64. Կարդա՛ մարդկանց անունները: Արտագրի՛ր *ե* տառ ունեցողները.

Տե՛ս առաջադրանք 63-ը:

65. ա) Նույն գույնն ունեցող վանկերը միացրո՛ւ և ստացված բառերը տեղադրի՛ր համապատասխան նկարների տակ (տե՛ս հավելված 2):

բ) Գրի՛ր բաղաձայնով սկսվող բառերը:

65-րդ առաջադրանքի իրականացման նպատակը կարդալու կարողության զարգացումն է՝ վանկերը բառում համադրելու միջոցով: Այս առաջադրանքի կատարմանը կնպաստեն վանկերի համապատասխան գույները, ինչպես նաև պատկերված նկարները: Առաջադրանքի 2-րդ պահանջը վերաբերում է գրելու կարողության զարգացմանը՝ որոշակի առաջադրանքով արտագրության միջոցով: Դժվարանալու դեպքում կարելի է առաջարկել միայն ընդգծել բաղաձայնով սկսվող բառերը:

66. Կարդա՛ և գուշակի՛ր հանելուկը:

66-րդ առաջադրանքի իրականացման նպատակը կարդալու կարողության զարգացումն է՝ վանկերը համադրելով, որն առաջարկվել է պատասխան-բառը կարդալու միջոցով:

67. Կարդա՛: Տնակում արտագրի՛ր 2 ձայնավոր ունեցող բառերը:

Այս առաջադրանքի իրականացման միջոցով երեխան առավել ուշադիր է բառի տառային պատկերին, քանի որ նա պետք է որոշի 2 ձայնավոր ունեցող բառերը և արտագրի դրանք: Միևնույն ժամանակ ամրապնդվում է պատկերացումը ձայնավորների մասին: Դժվարանալու դեպքում կարելի է առաջարկել ընդգծել պահանջվող բառերը կամ օգտվել ձայնավորների հուշող քարտից, որը կարելի է պատրաստել երեխայի հետ միասին: Խորհուրդ է տրվում որպես հարմարեցում կիրառել այս քարտերը (ձայնավորների և

բաղաձայնների) և օգտագործել դրանք նմանատիպ առաջադրանքների կատարման ժամանակ:

68. Կարդա՛առածը: Արտագրի՛ր ձայնավորով վերջացող բառերը:

Տե՛ս առաջադրանք 67-ը:

69. Բառաշարքից արտագրի՛ր այն բառերը, որոնք սկսվում և վերջանում են ձայնավորով:

Տե՛ս առաջադրանք 67-ը:

70. Կարդա՛/լսի՛ր հանելուկները: Պատասխան-բառում գրի՛ր անհրաժեշտ ձայնավորը:

Տե՛ս առաջադրանք 67-ը, սակայն այստեղ հանելուկը կարող են կարդալ նաև համադասարանցիները:

71. Կարդա՛ բառազույգերը: Գրի՛ր կրկնվող տառը:

71-րդ առաջադրանքի իրականացման նպատակը բառի տառային պատկերը յուրացնելու միջոցով կարդալու կարողության, ինչպես նաև մտածողության զարգացումն է: Դժվարանալու դեպքում կարելի է առաջարկել ընդգծել անհրաժեշտ տառը: Առաջարկում ենք նաև հարցնել՝ ձայնավո՞ր է, թե՞ բաղաձայն:

72. Փոխի՛ր 1 ձայնավոր և կազմի՛ր նոր բառեր: Գրի՛ր դրանք:

72-րդ առաջադրանքի իրականացումը նպաստում է կարդալու կարողության զարգացմանը և ձայնավորների կրկնությանը: Դժվարանալու դեպքում առաջարկում ենք գրել բոլոր ձայնավոր հնչյուն-տառերը, ինչը կուղղորդի երեխային: Առաջարկում ենք նաև վերջում կարդալ ստացված բառերը և ասել դրանց նշանակությունը:

73. Բառաշարքից արտագրի՛ր բաղաձայնով վերջացող բառերը:

Այս առաջադրանքի իրականացումը կնպաստի բառը տառային վերլուծության ենթարկելու, ինչպես նաև գրելու կարողությունների զարգացմանը, բաղաձայնների կրկնությանն ու ամրապնդմանը: Կարելի է առաջարկել մինչև գրելը կարդալ տրված բառերը և բանավոր կատարել առաջադրանքը, հետո՝ գրառել: Դժվարանալու դեպքում առաջարկում ենք ընդգծել բաղաձայնով վերջացող բառերը:

74. Բառաշարքից արտագրի՛ր այն բառերը, որոնք սկսվում և վերջանում են բաղաձայնով:

Տե՛ս առաջադրանք 73-ը, սակայն այստեղ պահանջը մի քիչ բարդանում է, որովհետև երեխան պետք է ուշադրություն դարձնի նաև բառասկզբին:

75. ա) Արտագրի՛ր շուտասելուկը՝ յուրաքանչյուր բառի կողքին գրելով բաղաձայն ու ձայնավոր հնչյունների քանակը:

բ) Կրկնի՛ր շուտասելուկը:

Այս առաջադրանքի իրականացման նպատակը գրելու վարժություն կատարելն է, սակայն այն արդյունավետ է նաև խոսքի հնչյունային կողմի զարգացման համար, քանի որ գրառելուց հետո առաջարկում ենք կրկնել այն: Քանի որ նախորդ առաջադրանքներում երեխան արդեն վարժվել է ձայնավոր, բաղաձայն հնչյուն-տառերի տարբերակմանը, առաջարկել ենք նաև հաշվել և գունավոր մատիտներով նշել դրանց թիվը: Դժվարանալու դեպքում առաջարկում ենք այս պահանջը բանավոր կատարել:

76. Կարդա՛ բառերը: Հաշվի՛ր տառերի քանակը և գրի՛ր համապատասխան թիվը:

76-րդ առաջադրանքի իրականացման նպատակը բառում տառերի քանակը և հերթականությունը տեսողությամբ ընկալելն է, դրա համար առաջարկել ենք բառեր, որոնցում երեխան պետք է հաշվի տառերի քանակը և գրի՝ ըստ տրված օրինակի: Ընդ որում, այդ բառերում առկա է հնչյունների և տառերի անհամապատասխանություն: Մեր համոզմամբ՝ այս վարժությունը դժվարություն չի առաջացնի:

77. Գրի՛ր *ե*-ով սկսվող թվանշանների անվանումները:

77-րդ առաջադրանքի իրականացման նպատակը երեխայի ինքնուրույնության, միևնույն ժամանակ *ե*-ն բառասկզբում ընկալելու կարողության զարգացումն է: Դժվարանալու դեպքում կարելի է բանավոր մշակել առաջադրանքը, հետո՝ գրառել:

78. ա) Անվանի՛ր պատկերված առարկաները: Տեղադրի՛ր բառերը համապատասխան նկարների տակ (տե՛ս հավելված 3):

բ) Որոշի՛ր յուրաքանչյուր բառի տառերի քանակը: Քառակուսու մեջ գրի՛ր թիվը:

Այս առաջադրանքի իրականացման նպատակը կարդալու կարողության, ինչպես նաև բառը տառային վերլուծության ենթարկելու կարողության զարգացումն է: Այստեղ շատ կարևոր է, որ երեխան նախ տեսնի բառի գրությունը, այնուհետև որոշի տառերի քանակը, քանի որ առաջարկվող բառերում հնչյունների և տառերի քանակը չի համապատասխանում: Առաջադրանքը հնարավոր է կատարել նաև առանց նախապես տրված նկարներն անվանելու: Դժվարության դեպքում կարելի է գրել բառերը անունների մոտ և առաջարկել երեխային համադրել հավելվածից բերված բառերի հետ:

79. Լրացրո՛ւ վանդակները:

79-րդ առաջադրանքի իրականացման նպատակը բառն ինքնուրույն գրելու կարողության մարզումն է, որին օգնելու է տրված օրինակը:

80. Կարդա՛ և գուշակի՛ր հանելուկը: Գրի՛ր պատասխան-բառը՝ կողքին գրելով բաղաձայնների ու ձայնավորների քանակը:

80-րդ առաջադրանքի իրականացման նպատակը ինքնուրույն գրելու կարողության զարգացումն է: Ցանկալի է, որ հանելուկը ևս երեխան կարդա ինքնուրույն, սակայն դժվարանալու դեպքում առաջարկում ենք ներգրավել մյուս աշակերտներին:

81. Անվանումները գծով համապատասխանեցրո՛ւ կետադրական նշաններին:

81-րդ առաջադրանքի իրականացման նպատակը կետադրական նշանները ճանաչելն ու դրանք անվանելն է: Միևնույն ժամանակ երեխան պետք է կարդա այդ անվանումները: Կարելի է առաջարկել նաև գրված անվանումների կողքին նկարել այդ նշանները՝ նայելով դրանց պատկերներին:

82. Կարդա՛քառատողը: Անվանի՛ր կետադրական նշանները:

Այս առաջադրանքում արդեն վերևի վարժությունը տեղափոխել ենք քառատողի վրա, որպեսզի երեխան հասկանալով կարդա նաև կետադրական նշանները: Միևնույն ժամանակ զարգանում է կարդալու կարողությունը: Դժվարանալու դեպքում կարելի է կարդալ միայն կետադրական նշաններ կրող բառերը և անվանել այդ նշանները:

83. Կարդա՛ ծաղիկների անվանումները: Արտագրի՛ր բառի միայն բաղաձայնները:

Այս առաջադրանքի իրականացման նպատակը կարդալու և գրելու կարողության զարգացումն է, որի հիմքում դրել ենք բառի տառային վերլուծությունը: Նաև՝ երեխան կրկնում է ձայնավորներն ու բաղաձայնները: Դժվարանալու դեպքում առաջարկում ենք նախ՝ ընդգծել բաղաձայնները, հետո՝ արտագրել:

84. ա) Կարդա՛ բանաստեղծության քառատողը: Արտագրի՛ր՝ յուրաքանչյուր բառի կողքին գրելով բաղաձայն և ձայնավոր հնչյունների քանակը:

բ) Ասա՝ իսկ դու ի՞նչ ես նվիրել քո մայրիկին:

84-րդ առաջադրանքի իրականացման նպատակը ձայնավոր, բաղաձայն հնչյուն-տառերի տարբերակումն է, ինչպես նաև բառի տառային վերլուծություն կատարելու և գրելու կարողությունների զարգացումը: Առաջադրանքի հաջորդ պահանջը վերաբերում է կարդացածը հասկանալուն, որին ևս պարբերաբար պետք է հետևենք:

85. Գրի՛ր տառերից մեկը սկզբում և կարդա՛ ստացված բառը. (մ, տ, վ, շ, պ, հ)

Այս առաջադրանքի իրականացման նպատակը կարդալու և գրելու կարողության զարգացումն է: Բառերը ստանալուց հետո առաջարկում ենք, որ երեխան նաև կարդա դրանք:

86. ա) Անվանի՛ր պատկերված առարկաները: Տեղադրի՛ր բառերը համապատասխան նկարների տակ (տե՛ս հավելված 4):

բ) Գունավորի՛ր այն քառակուսին, որում պատկերված առարկայի անվանումը 6 հնչյուն ունի:

Տե՛ս առաջադրանք 78-ը, սակայն այստեղ երեխան տառերը հաշվելու փոխարեն պետք է հաշվի հնչյունների քանակը: Տվյալ առաջադրանքի իրականացման միջոցով երեխան հասկանում է, որ բառում հնչյունների և տառերի քանակը կարող է չհամապատասխանել, քանի որ առաջարկված բառերում նման անհամապատասխանություն առկա է: Դժվարանալու դեպքում առաջարկում ենք մինչև գրառելը առաջադրանքը կատարել բանավոր:

87. Լրացրո՛ւ վանդակները:

Տե՛ս առաջադրանք 79-ը, սակայն այստեղ նախ՝ չենք առաջարկել կատարման օրինակը, և, որ կարևորն է՝ գրվող բառերում տառերի քանակն աստիճանաբար ավելանում է, որը հետաքրքրություն է առաջացնում երեխայի մեջ:

88. ա) Կարդա՛ բանաստեղծության քառատողը: Ընդգծի՛ր իրար կողքի 2 բաղաձայն ունեցող բառերը:

բ) Քառատողից գտի՛ր և ասա՝ որտե՞ղ է ապրում մեղուն:

88-րդ առաջադրանքի իրականացման նպատակը երեխաների համար դժվար կարդացվող բառերի վրա ուշադրությունը կենտրոնացնելն է, տվյալ դեպքում՝ այն բառերի, որոնցում 2 բաղաձայն իրար կողքի են: Կարդալու դժվարություն ունեցող երեխայի համար առաջարկում ենք. նախ՝ ընդգծել բաղաձայնները, հետո՝ կարդալ: Առաջադրանքի 2-րդ պահանջը միտված է կարդացածը հասկանալը ստուգելուն, որը ևս չափազանց կարևոր է: Առաջարկում ենք նման առաջադրանքներ հնարավորինս շատ կիրառել:

89. Լրացրո՛ւ դատարկ վանդակները և կարդա՛ ստացված բառերը:

89-րդ առաջադրանքի իրականացման նպատակը կարդալու և գրելու կարողությունների զարգացումն է: Դժվարանալու դեպքում առաջարկում ենք, որ վանդակներից մեկը լրացնի աշակերտներից մեկը (օգնելու նպատակով):

90. Գրի՛ր տրված տառերից մեկը սկզբում և կարդա՛ ստացված բառը.

(պ, հ, շ, դ, փ, ց, ք)

Տե՛ս առաջադրանք 85-ը, սակայն այստեղ բառաշարքն առաջարկել ենք ուղղահայաց դասավորությամբ:

91. Կարդա՛ բառազույգերը: Գրի՛ր ավելացած տառը:

Տե՛ս առաջադրանք 71-ը, սակայն այստեղ նշված նպատակներին հասնում ենք ավելացած տառը գտնելու միջոցով:

92. Լրացրո՛ւ դատարկ վանդակները և կարդա՛ ստացված բառերը:

Տե՛ս առաջադրանք 89-ը, սակայն՝ հակառակ հաջորդականությամբ:

93. Նկարները խմբավորի՛ր սյունակներում (տե՛ս հավելված 5): Անվանի՛ր դրանք:

93-րդ առաջադրանքի իրականացման նպատակը ընդհանրացում կատարելու կարողության, երեխայի մտածողության զարգացումն է:

94. Կարդա՛/լսի՛ր, որոշի՛ր հանելուկների պատասխանները և գրի՛ր:

94-րդ առաջադրանքի իրականացման նպատակը ևս մտածողության, ընդհանրացում կատարելու կարողության զարգացումն է, այս դեպքում՝ լսած կամ կարդացած հանելուկը գուշակելու ճանապարհով: Միևնույն ժամանակ պահանջվում է, որ երեխան գրի հանելուկի պատասխանը, որը միտված է գրելու կարողության զարգացմանը: Որպես այս առաջադրանքի իրականացման օգնող միջոց առաջարկել ենք պատասխան բառերի նկարներ և գծապատկեր: Կարելի է առաջարկել աշխատել զույգով:

95. Արտագրի՛ր բառերը համապատասխան ամպիկներում:

95-րդ առաջադրանքի իրականացման նպատակը թե՛ ընդհանրացում կատարելու և թե՛ գրելու կարողության զարգացումն է: Քանի որ նախորդ վարժություններում երեխան արդեն նմանօրինակ ընդհանրացումներ իրականացրել է, հետևաբար այստեղ նա հեշտությամբ կկատարի այս առաջադրանքը:

96. Կարդա՛ տարվա եղանակների անվանումները: Արտագրի՛ր ճիշտ հաջորդականությամբ:

96-րդ առաջադրանքի իրականացման նպատակը տարվա եղանակների անվանումների կրկնությունն ու ամրապնդումն է, կարդալու և գրելու կարողությունների զարգացումը: Դժվարանալու դեպքում կարելի է մինչև գրելը կատարել բանավոր, հետո՝ գրառել պատասխանը:

97. Լրացրո՛ւ դատարկ վանդակները և կարդա՛ ստացված բառերը:

Տե՛ս առաջադրանքներ 89-ը, 92-ը:

98. Կարդա՛ բառերը: Արտագրի՛ր գծապատկերին համապատասխանող բառերը:

98-րդ առաջադրանքի իրականացման նպատակը բառի տառային պատկերը յուրացնելն ու կարդալու դժվարությունները հաղթահարելն է: Դժվարանալու դեպքում կարելի է առաջարկել պահանջվող բառը/բառերը գրել գծապատկերի մեջ: Երեխան կարող է նաև բարձրաձայն կարդալ բառերը և մատների վրա հաշվել տառերի քանակը:

99. ա) Արտագրի՛ր բառերը: Ընդգծի՛ր *և* տառը:

բ) Դրանցից 2-ով կազմի՛ր նախադասություններ և գրի՛ր:

99-րդ առաջադրանքի իրականացման նպատակը երեխայի ուշադրությունն անուղղակի կերպով կենտրոնացնելն է *և*-ի ուղղագրությանը: Միևնույն ժամանակ առաջարկել ենք այդ բառերից 2-ով նախադասություն կազմել: Այս վերջին առաջադրանքի իրականացումը կարող է որոշել ուսուցիչը՝ պայմանավորված երեխայի անհատական առանձնահատկություններով:

100. Արտագրի՛ր բառերը՝ խմբավորելով:

Այս առաջադրանքի իրականացմամբ երեխայի ուշադրությունը դարձյալ կենտրոնացնում ենք *և*-ի ուղղագրությանը արտագրելու միջոցով, սակայն՝ մի դեպքում բառասկզբում, մյուս դեպքում՝ բառամիջում: Առաջադրանքի իրականացումը զարգացնում է նաև ընդհանրացնելու կարողությունը: Երեխային օգնելու նպատակով ուսուցիչը կարող է հուշել, թե յուրաքանչյուր սյունակում քանի բառ կարող է լինել: Դժվարանալու դեպքում կարելի է առաջարկել երեխային ընդգծել բառավերջում *և* տառն ունեցող բառերը, կամ՝ հակառակը:

101. Դատարկ վանդակներում գրի՛ր *և* տառը և կարդա՛ բառերը:

101-րդ առաջադրանքի իրականացման նպատակը դարձյալ *և*-ի ուղղագրության ամրապնդումն է, սակայն մեկ այլ եղանակով: Առաջադրանքը զարգացնում է կարդալու, նաև և-ը գրելու կարողությունները:

102. Կարդա՛ նախադասությունները: Արտագրի՛ր գծապատ-կերին համապատասխանող բառերը.

Տե՛ս առաջադրանք 98-ը:

103. Կարդա՛ շաբաթվա օրերի անվանումները: Արտագրի՛ր ճիշտ հաջորդականությամբ:

Տե՛ս առաջադրանք 96-ը, սակայն այս դեպքում առաջադրանքը վերաբերում է շաբաթվա օրերին:

104. Կարդա՛ պատմությունը: Ընդգծի՛ր *և* ունեցող բառերը:

104-րդ առաջադրանքի իրականացման նպատակը *և*-ի ուղղագրության ամրապնդումն է, ինչպես նաև կարդալու կարողության զարգացումը: Դժվարանալու դեպքում կարելի է նախ ընդգծել *և*-ով բառերը և կարդալ միայն դրանք:

105. Կարդա՛ պատմությունը: Արտագրի՛ր Հասմիկի ասած նախադասությունները:

105-րդ առաջադրանքի իրականացման նպատակը կարդալու, գրելու կարողությունների զարգացումն է և կարդացածը հասկանալու ստուգումը:

106. Կատարի՛ր թվաբանական գործողությունները, ստացի՛ր բառեր և գրի՛ր:

Տե՛ս առաջադրանք 44-ը, սակայն այստեղ աշխատանքը վանկային մակարդակում է: Դժվարանալու դեպքում առաջարկում ենք գրել առաջին օրինակը:

107. Կարդա՛ տրված բառերը: Արտագրի՛ր դրանք համապատասխան սյունակներում:

Տե՛ս առաջադրանք 93-ը, սակայն այս դեպքում երեխան ոչ թե նկարները պետք է խմբավորի, այլ բառերը, ինչը զարգացնում է նաև կարդացածը հասկանալու կարողությունը:

108. Որոշի՛ր՝ քանի՞ վանկից են կազմված պատկերված կենդանիների անվանումները: Կից շրջաններում գրի՛ր համապատասխան թիվը:

108-րդ առաջադրանքի իրականացման նպատակը բառը վանկային վերլուծության ենթարկելու կարողության զարգացումն է, որի համար առաջարկել ենք երեխաներին սիրելի նկարների պատկերները: Դժվարանալու դեպքում կարելի է աշխատանքն իրականացնել ծափերով:

109. Կարդա՛: Արտագրի՛ր միավանկ բառերը:

109-րդ առաջադրանքի իրականացման նպատակը դարձյալ բառերի վանկային վերլուծություն կատարելու կարողության զարգացումն է, սակայն այս դեպքում՝ արդեն բառը կարդալու միջոցով: Այս առաջադրանքում մենք բառերը ներկայացրել ենք վանկային կորերով, որպեսզի երեխան հեշտ կողմնորոշվի, կարողանա առանց դժվարության առանձնացնել միավանկ բառերը և արտագրել դրանք:

Դժվարանալու դեպքում կարելի է առաջարկել կարդալ միայն միավանկ բառերը, հետո արտագրել դրանք:

110. Կարդա՛ քառատողը: Ընդգծի՛ր իրար կողքի 2 բաղաձայն ունեցող բառերը:

Տե՛ս առաջադրանք 88-ը:

111. Կարդա՛ քառատողը: Ընդգծի՛ր միավանկ բառերը:

111-րդ առաջադրանքի իրականացման նպատակը բառը վանկային վերլուծության ենթարկելու կարողության զարգացումը և տարբեր վանկային կառույցներ ունեցող բառերի տարբերակումն է: Դժվարանալու դեպքում կարելի է առաջարկել միայն ընդգծել միավանկ բառերը, իհարկե, նախօրոք որոշելով դրանք:

112. Միացրո՛ւ համապատասխան վանկերը, ստացի՛ր բառեր և գրի՛ր:

112-րդ առաջադրանքի իրականացման նպատակը վանկերը բառում համադրելու, ինչպես նաև կարդալու և գրելու կարողությունների զարգացումն է: Դժվարանալու դեպքում կարելի է օգնել երեխային՝ սլաքներով միացնելով համապատասխան վանկերը:

113. Կարդա՛ բանաստեղծության քառատողը: Ընդգծի՛ր կողք կողքի 3 բաղաձայն ունեցող բառերը:

Տե՛ս առաջադրանք 88-ը: Այս դեպքում 2-ի փոխարեն առաջարկվում է ընդգծել իրար կողքի 3 բաղաձայն ունեցող բառերը: Նշենք, որ հատկապես այս կառույցով բառերի ընթերցանության ժամանակ են երեխաները դժվարանում: Սա լավ վարժություն է ճիշտ կարդալու որակական հատկանիշը ձևավորելու համար:

114. Գրի՛ր հաջորդող բառը:

114-րդ առաջադրանքի իրականացման նպատակը գրելու կարողության, մտածողության զարգացումն է: Առաջադրանքը հետաքրքիր է, որովհետև ինքնուրույնություն է պահանջում: Դժվարանալու դեպքում կարելի է բանավոր մշակել պատասխանները, հետո՝ գրառել:

115. ա) Կարդա՛ պատմությունը: Արտագրի՛ր գծապատկերին համապատասխանող բառերը:

բ) Գրի՛ր պատասխանները:

Տե՛ս առաջադրանք 98-ը, սակայն այստեղ երեխան աշխատում է ոչ թե բառերի, այլ պատմության շուրջ: Առաջադրանքի 2-րդ հատվածում ներկայացրած հարցերը բխում են այդ պատմության բովանդակությունից:. Դրանց նպատակը կարդացածի հասկացումը ստուգելն է: Դժվարանալու դեպքում առաջադրանքի 2-րդ պահանջը կարելի է բանավոր իրականացնել:

116. Արտագրի՛ր տառերի խումբը համապատասխան վանդակներում և ստացի՛ր բառեր: Կարդա՛ դրանք:

116-րդ առաջադրանքի իրականացման նպատակը կարդալու կարողության զարգացումն է: Դժվարանալու դեպքում կարելի է տառակապակցությունները սլաքով միացնել համապատասխան վանդակներին:

117. Անվանի՛ր պատկերված կենդանիներին՝ վանկատելով: Հաշվի՛ր և քառակուսիներում գրի՛ր վանկերի քանակը:

117-րդ առաջադրանքի իրականացման նպատակը բառը վանկային վերլուծության ենթարկելու կարողության զարգացումն է: Այստեղ ևս կարելի է կիրառել ծափերով վանկերի բաժանելու հնարը:

118. Կարդա՛ տրված բառերը, բաժանի՛ր վանկերի: Արտագրի՛ր *րի* վանկն ունեցողները.

118-րդ առաջադրանքի իրականացման նպատակը բառը վանկային վերլուծության ենթարկելու կարողության զարգացումն է, ինչպես նաև կրկնվող վանկի պատկերի մտապահումը:

119. Արտագրի՛ր միավանկ բառերը սրտիկներում, բազմավանկը՝ ամպիկներում:

119-րդ առաջադրանքի իրականացման նպատակը բառը վանկային վերլուծության ենթարկելու կարողության, բառերը (ըստ վանկային կառույցի) տարբերակելու, ընդհանրացնելու, միևնույն ժամանակ կարդալու և գրելու կարողությունների զարգացումն է:

120. Տրված վանկերից ստացի՛ր բառեր և գրի՛ր:

Այս առաջադրանքի իրականացման նպատակը, ի տարբերություն նախորդի, վանկերը բառում համադրելու, գրելու կարողության զարգացումն է: Առաջարկում ենք նաև վերջում կարդալ ստացված բառերը:

121. Կարդա՛ քառատողը: Ընդգծի՛ր 2 վանկ ունեցող բառերը:

121-րդ առաջադրանքի իրականացման նպատակը կարդալու, բառը (ըստ վանկային կառուցվածքի) տարբերակելու կարողության զարգացումն է: Դժվարանալու դեպքում առաջարկում ենք վանկային կորերով նշել բոլոր բառերը, իսկ երեխային՝ ընտրել 2 վանկից կազմվածները:

122. Կարդա բառերը: Ընդգծի՛ր կրկնվող վանկը:

122-րդ առաջադրանքի իրականացման ընթացքում երեխան պետք է բոլոր բառերում գտնի կրկնվող վանկը՝ վանկային

վերլուծություն կատարի: Դժվարանալու դեպքում առաջարկում ենք առաջին բառում ընդգծել *կո* վանկը, իսկ մնացած բառերում երեխան կփորձի գտնել ինքնուրույն:

123. Կարդա՛ ասացվածքը: Բառերը կորագծերով բաժանի՛ր վանկերի:

Այս առաջադրանքի իրականացման նպատակը կարդալու կարողության զարգացումն է, ինչպես նաև ասացվածքի գաղափարի ընկալումը: Առաջադրանքի կատարումը դյուրինացնելու նպատակով առաջարկում ենք նախ՝ բառերը կորագծերով բաժանել վանկերի, հետո՝ ընթերցել ասացվածքը և բացատրել դրա իմաստը:

124. Կարդա՛ հանելուկը: Վանկատի՛ր բառերը կորագծերով: Պատասխան-բառը գրի՛ր վանկատած:

Տե՛ս առաջադրանք 123-ը, սակայն այստեղ հանելուկի պատասխան-բառը երեխան պետք է գրի ինքնուրույն և վանկատած: Դժվարանալու դեպքում առաջարկում ենք գրել պատասխան-բառը, իսկ վանկատումը կատարել կորագծերով:

125. Արտագրի՛ր հակառակ իմաստ ունեցող բառերը ճիշտ տեղերում:

125-րդ առաջադրանքի իրականացման նպատակը կարդալու կարողության, կարդացածը հասկանալու զարգացումն է հակառակ իմաստ ունեցող բառերը ճիշտ տեղերում արտագրելու միջոցով: Դժվարանալու դեպքում առաջարկում ենք նույն գույնով ընդգծել հականշային զույգերը, ինչը երեխային կհուշի, թե որ բառը որին համադրի:

126. Տրված բառերը արտագրի՛ր համապատասխան տողի վրա:

126-րդ առաջադրանքի իրականացման նպատակը կարդացածը հասկանալու կարողության զարգացումն է, ինչպես նաև բառապաշարի հարստացումը: Այս դեպքում մենք համապատասխան գույներով հուշել ենք, թե որ բառը որտեղ կլինի ճիշտ, քանի որ մեր նպատակը ավելի շատ տվյալ բառը արտագրելու և ճանաչելու կարողության զարգացումն է:

127. Ընդգծի՛ր համապատասխան բառը:

127-րդ առաջադրանքի իրականացման նպատակը ընդհանրացնելու և մասնավորեցնելու, կարդալու կարողությունների զարգացումն է, ինչպես նաև բառապաշարի հարստացումը: Առաջարկված կատարման օրինակը երեխային կհուշի, թե որ բառն է պահանջվում ընդգծել: Միևնույն ժամանակ կարևոր է, որ երեխան հասկանա կարդացած բառի/բառերի իմաստը/իմաստները: Կարելի է նաև լրացուցիչ հարցեր առաջարկել: Օրինակ՝ էլ ի՞նչ մրգեր կանվանես և այլն:

128. Տրված բառերի կողքին արտագրի՛ր իմաստով մոտ բառերը:

Տե՛ս առաջադրանք 125-ը, սակայն այստեղ երեխան պետք է համապատասխան տեղերում արտագրի հոմանիշները:

129. Կարդա՛ կենդանիների ձագուկների անվանումները: Արտագրի՛ր համապատասխան կենդանու նկարի տակ:

129-րդ առաջադրանքի իրականացման նպատակը թե՛ գրելու կարողության զարգացումն է և թե՛ բառապաշարի հարստացումը:

Դժվարանալու դեպքում առաջարկում ենք ոչ թե գրել, այլ համապատասխան նկարը գծերով միացնել պահանջվող բառին:

130. ա) Կարդա՛ ամիսների անվանումները: Արտագրի՛ր ճիշտ հաջորդականությամբ:

բ) Ասա՛ քո սիրած ամիսը: Հիմնավորի՛ր պատասխանդ:

Տե՛ս առաջադրանքներ 96-ը և 103-ը: Այստեղ ավելանում է նաև երեխայի կողմից տրվող բանավոր պատասխանը և դրա հիմնավորումը: Դժվարանալու դեպքում ուսուցիչը կարող է առաջարկել երեխային գրել միայն գարնան (ամռան, աշնան, ձմռան) ամիսների անվանումները:

131. Կարդա՛ քառատողը: Արտագրի՛ր գծապատկերին համապատասխանող բառերը:

Տե՛ս առաջադրանք 115-ը:

132. Կարդա՛ ծառերի անվանումները: Արտագրի՛ր 3 վանկ ունեցողները:

132-րդ առաջադրանքի իրականացման նպատակը կարդալու և գրելու կարողությունների զարգացումն է, բառապաշարի հարստացումը և բառը վանկային վերլուծության ենթարկելու կարողության զարգացումը: Դժվարանալու դեպքում առաջարկում ենք բառերը ծափերով բաժանել վանկերի և որոշել վանկերի քանակը: Երեխան կարող է վանկատել նաև գրքում և հաշվել վանկերի քանակը:

133. Տրված խառը վանկերից ստացի՛ր բառեր և գրի՛ր:

133-րդ առաջադրանքի իրականացման նպատակը վանկերը համադրելու միջոցով բառեր կազմելու և կարդալու կարողության զարգացումն է: Պահանջվում է նաև գրի առնել ստացված բառերը:

Դժվարանալու դեպքում առաջարկում ենք առաջադրանքը կատարել բանավոր:

134. Կարդա՛ բանաստեղծության հատվածը: Արտագրի՛ր *ե* տառով սկսվող բառերը:

134-րդ առաջադրանքի իրականացման նպատակը կարդալու, գրելու կարողությունների զարգացումն է, ինչպես նաև *ե*-ի ուղղագրությունը բառասկզբում: Դժվարանալու դեպքում առաջարկում ենք ընդգծել պահանջվող բառերը:

135. Կարդա՛ տեքստը: Գտի՛ր և ընդգծի՛ր *ընթրիք* բառը:

135-րդ առաջադրանքի իրականացման նպատակը կարդալու, ինչպես նաև տեքստում կողմնորոշվելու կարողությունների զարգացումն է: Դժվարանալու դեպքում ուսուցիչը կարող է նախադասություն կազմելու պահանջը չհանձնարարել:

136. Փակագծում տրված բառերից արտագրի՛ր համապատասխան բառը:

136-րդ առաջադրանքի իրականացումը միտված է կարդացածը հասկանալը ստուգելուն, որովհետև առանց հասկանալու հնարավոր չէ իրականացնել այն: Ուսուցչի ընտրությամբ կարելի է մեկ օրինակով ցույց տալ կամ նախ բանավոր կատարել, ապա՝ հանձնարարել գրել:

137. ա) Կազմի՛ր բառակապակցություններ և գրի՛ր:

բ) Դրանցից 2-ով կազմի՛ր նախադասություններ և գրի՛ր:

Այս առաջադրանքի իրականացման նպատակը գրելու կարողության զարգացումն է բառակապակցություններ կազմելու միջոցով: Առաջարկվող պատկերները կօգնեն երեխային կողմնորոշվելու և ճիշտ բառը գրելու: Առաջարկել ենք նաև դրանցով

կազմել նախադասություններ: Եթե երեխան դժվարանա, կարելի է բավարարվել միայն առաջադրանքը բանավոր կատարելով:

138. Ընդգծի՛ր համապատասխան բառը:

138-րդ առաջադրանքի իրականացման նպատակը կարդալու և կարդացածը հասկանալու կարողության զարգացումն է:

139. Կարդա՛ նախադասությունները: Արտագրի՛ր բառակապակցությունները:

139-րդ առաջադրանքի իրականացման նպատակը բառակապակցության և նախադասության տարբերակման կարողության զարգացումն է: Դժվարանալու դեպքում կարելի է ընդգծել բառակապակցությունները:

140. Կարդա՛ բառազույգերը: Ընդգծի՛ր փոխված տառերը:

140-րդ առաջադրանքի իրականացման նպատակը բառի տառային պատկերի վրա երեխայի ուշադրությունը կենտրոնացնելը և դրանով իսկ կարդալու կարողության զարգացումն է: Դժվարանալու դեպքում կարելի է ցույց տալ օրինակով:

141. Կարդա՛/լսի՛ր պատմությունը: Ընդգծի՛ր 3 բառակապակցություն:

141-րդ առաջադրանքի իրականացման նպատակը կարդալու կարողության զարգացումն է, ինչպես նաև բառակապակցության ամրապնդումը: Նշենք, որ տեքստը ներկայացված է հարմարեցված տարբերակով: Եթե երեխան դժվարանա կարդալ, առաջարկում ենք կատարել զույգերով աշխատանք:

142. Կարդա՛ նախադասությունների զույգը: Ընդգծի՛ր փոխված բառերը:

142-րդ առաջադրանքի իրականացման նպատակը կարդալու և կարդացածը հասկանալու կարողության զարգացումն է:

143. ա) Կարդա՛ նախադասությունները: Որոշի՛ր բառերի քանակը և գունավորի՛ր համապատասխան թիվը:
բ) Ընդգծի՛ր մարդկանց անունները:

143-րդ առաջադրանքի իրականացման նպատակը նախադասությունը բառերի վերլուծելու, կարդալու կարողությունների զարգացումն է: Դժվարության դեպքում կարելի է առաջին օրինակը հանձնարարել աշակերտներից մեկին: Մարդկանց անուններն ընդգծելու վերաբերյալ առաջադրանքը մեկ անգամ ևս կհիշեցնի երեխային հատուկ անունների ուղղագրությունը:

144. Նշի՛ր այն նախադասության շրջանը, որը համապատասխանում է նկարին:

144-րդ առաջադրանքի իրականացման նպատակը կարդալու և կարդացածը հասկանալու կարողությունների զարգացումն է:

145. Տեղադրի՛ր համապատասխան բառը և կարդա՛ ստացված նախադասությունները:

145-րդ առաջադրանքի իրականացման նպատակը կարդալու, նախադասություն կազմելու և այն գրի առնելու կարողությունների զարգացումն է: Դժվարանալու դեպքում կարելի է առաջարկել ընդգծել անհրաժեշտ բառը:

146. Լրացրո՛ւ նախադասության բաց թողնված բառը:

Տե՛ս առաջադրանք 145-ը, սակայն՝ փոքր-ինչ բարդեցված տարբերակով:

147. Որոշի՛ր ամիսը և գրի՛ր:

147-րդ առաջադրանքի իրականացման նպատակը կարդալու, գրելու կարողությունների զարգացումն է, ինչպես նաև գիտելիքների ստուգումը: Դժվարանալու դեպքում երեխան կարող է բանավոր պատասխանել կարդացած հարցին:

148. Հանելուկի պատասխան-բառում գրի՛ր անհրաժեշտ տառը: Կարդա՛ այն:

148-րդ առաջադրանքի իրականացման նպատակը կարդալու կարողության զարգացումն է, ինչպես նաև հայոց գրերի ստեղծող Մեսրոպ Մաշտոցի մասին ևս մեկ անգամ հիշեցնելը: Առաջադրանքում անդրադարձ կա նաև հատուկ անունների գրությանը:

149. Նախադասությունների մեջ տեղադրի՛ր համապատասխան բառերը:

149-րդ առաջադրանքի իրականացման նպատակը հատկապես մեկ տառով տարբերվող բառերը կարդալու և գրելու կարողությունների զարգացումն ու դրանց իմաստը հասկանալն է:

150. Շարունակի՛ր քառատողը:

150-րդ առաջադրանքի իրականացման նպատակը կարդալու և գրելու վարժության միջոցով հայտնի բանաստեղծության քառատողի վերհիշումն է:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ավագյան Լ., Ծատուրյան Դ., Երիցյան Ֆ., «Մայրենի 2» աշխատանքային տետր, Ե., , 32 էջ:
2. Գյուլամիրյան Ջ. Հ., «ԶԱՆԳԱԿ» այբբենարանի և «ԵՍ ՍՈՎՈՐՈՒՄ ԵՄ ԳՐԵԼ» աշխատանքային տետրերի մեթոդական ուղեցույց, Եր., 2003, 178 էջ:
3. Թեթև մտավոր հետամնացություն ունեցող երեխաների ուսուցման մեթոդական ձեռնարկ, Մայրենի (1-4-րդ դասարաններ), Աշխ. խումբ՝ Կ. Չիբուխչյան, Լ. Ավագյան, Գ. Մկրտչյան և այլք, Եր., 2009, 63 էջ:
4. Միքայելյան Ա. Վ., Մայրենի լեզվի ուսուցման մի քանի հարցեր ներառական կրթության պայմաններում, «Հատուկ մանկավարժություն և վերականգնողական հոգեբանություն» գիտական հանդես 1(2), Եր., 2011, էջ 36-41:
5. Սարգսյան Վ. Ա., «Այբբենարան», ուսուցչի ձեռնարկ, Եր., 2011, 236 էջ:
6. Սարգսյան Վ. Ա., «Այբբենարան», Եր., 2019, 155 էջ:
7. Սարգսյան Վ. Ա., «Մայրենի 1», Եր., 2016, 63 էջ:
8. Քյուրքչյան Ա. Ն., Տեր-Գրիգորյան Լ. Ա., «Այբբենարան» ուսուցչի ձեռնարկ, Եր., 2007, 65 էջ:
9. Քյուրքչյան Ա. Ն., Տեր-Գրիգորյան Լ. Ա., «Այբբենարան», Եր., 2010, 124 էջ:
10. Քյուրքչյան Ա. Ն., Տեր-Գրիգորյան Լ. Ա., «Մայրենի 1», Եր., 2022, 65 էջ:
11. Аксенова А. К., Методика обучения русскому языку в коррекционной школе, М., “Владос”, 2002, 320 с.
12. Лалаева Р. И., Логопедическая работа в коррекционных классах, М., 2001, 220 с.

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՀԱՐՄԱՐԵՑՈՒՄՆԵՐ

«ՄԱՅՐԵՆԻ 1»
(ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆ)

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳԻՐՔ-ՏԵՏՐԻ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

ՈՒՍՈՒՑՉԻ ՀԱՄԱՐ